


**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

ՖԻՆԲԱ ՈՒՎԿ

Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55
Էլ. փոստ info@finca.am
Հաշվետվություն թիվ 8, 10.06.2022թ.


“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

ստորագրող անձինք՝

Հարություն Չաղրյան <hr/> (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության ղեկավար <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	10.06.2022թ. <hr/> (ամսաթիվ)
--	--	---	--

Անուշ Պետրոսյան <hr/> (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	10/06/22 <hr/> (ամսաթիվ)
---	--	--	------------------------------------

Ստորագրությունները հավաստում են՝

Վարդան Հարոյան <hr/> (անուն, ազգանուն)	Վարչության անդամ, Գործառնական տնօրեն Վարչության նախագահի, Գործադիր տնօրենի ժ/պ <hr/> (պաշտոն)	 <hr/> (ստորագրություն)	10.06.2022թ. <hr/> (ամսաթիվ)
--	---	--	--



10 հունիս 2022թ.

Տեղեկանք

Տնօրենների խորհրդի անդամները, հիմք ընդունելով 28/10/2021թ. թիվ 34/2021, 17/12/2021թ. թիվ 41/2021 և 20/05/2022թ. թիվ 18/2022 որոշումները, որոշեցին.

1. Հաստատել 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային ընդհանուր 100,000 (մեկ հարյուր հազար) հատ պարտատոմսերի հինգերորդ փուլի թողարկումը երկու տարի ժամկետով, 6.5% (վեց ամբողջ հինգ տասնորդական տոկոս) տարեկան տոկոսադրույքով:
2. Տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 2,125,000 (երկու միլիոն մեկ հարյուր քսանհինգ հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով 85,000 (ութսունհինգ հազար) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ(եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 375,000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 15,000 (տասնհինգ հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:
3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1-ում ներկայացված թողարկման վերջնական պայմանների՝ մեկից ավելի հաջորդական օրերի ընթացքում՝ նախորդ տեղաբաշխման օրվա չտեղաբաշխված մնացորդը հաջորդ տեղաբաշխման օր տեղափոխման եղանակով, մինչև Թողարկման վերջնական պայմաններով սահմանված տեղաբաշխման ամբողջական ծավալի տեղաբաշխումը կամ Թողարկողի կողմից աճուրդի տեղաբաշխման ծավալի կտրման կամ աճուրդը չեղյալ հայտարարելու մասին որոշման կայացումը: Տեղաբաշխման սկիզբը սահմանել 21.06.2022թ., իսկ ավարտը՝ 27.06.2022թ. ներառյալ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի հաստատումը ստանալու դեպքում:
4. Արժեկտրոնների վճարումները սահմանել եռամսյակային պարբերականությամբ:

The members of the Board of Directors based on board resolutions N34/2021 as of 28/10/2021, N41/2021 as of 17/12/2021 and N18/2022 as of 20/05/2022 have resolved:

1. To approve the issue of the fifth tranche of non-convertible non-documentary 100,000 (one hundred thousand) coupon bonds with nominal value of USD 2,500,000 (two million five hundred thousand), with two-year maturity and 6.5% (six point five percent) annual interest rate.
2. To place bonds through "Armenia Securities Exchange" OJSC placement system. To issue and to place 85,000 (eighty-five thousand) bonds in the total amount of USD 2,125,000 (two million one hundred twenty-five thousand) through standard closed(European) auction excluding non-competitive and full-satisfaction bids, the remaining 15,000 (fifteen thousand) bonds in the amount of USD 375,000 (three hundred seventy-five thousand) should be obtained in nominal value by "ARARATBANK" OJSC in order to perform its market making services in secondary market aiming to increase the investment attractiveness and insuring bonds as liquid asset.
3. To implement bond issue and placement according to the final conditions of the bond issue stipulated in the attached Appendix 1. The placement will take place during more than one consecutive days by transferring the non-placed outstanding balance of the previous placement day to the next placement day until the placement of the entire volume defined by the final conditions or when the issuer decides to cut the auction of placement or cancel it. To set the start of the placement on 21.06.2022 and the end of the placement on 27.06.2022 inclusive in case of receiving the approval of "Armenian Stock Exchange" OJSC.
4. To set coupon payments on a quarterly basis.